Հատուկ կարծիք

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԴ/15069/02/18 քաղաքացիական գործով 10.03.2023 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

10.03.2023 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2023 թվականի մարտի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով Ռոբերտ Ռայան Դիկիի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.11.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռոբերտ Ռայան Դիկիի ընդդեմ «Թեղուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ 27.07.2014 թվականից մինչև 2018 թվականի փետրվարի ավարտն ընկած ժամանակահատվածի համար հայցվորին վճարման ենթակա հավելումը՝ նրա հիմնական աշխատավարձի երեսուն տոկոսի չափով, ինչպես նաև 19.03.2018 թվականից մինչև հայցադիմումը կրկին ներկայացնելու օրը ոչ աշխատողի մեղքով պարապուրդի համար վճարը՝ յուրաքանչյուր ժամի համար հայցվորի միջին ժամային աշխատավարձի երկու երրորդի չափով գումար բռնագանձելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.11.2020 թվականի որոշումը՝ «Թեղուտ» ՓԲԸ-ից՝ հօգուտ Ռոբերտ Ռայան Դիկիի՝ 47.095.100 ՀՀ դրամ՝ որպես 01.03.2018 թվականից մինչև 30.06.2018 թվականն ընկած ժամանակահատվածի համար ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին վճարման ենթակա գումար բռնագանձելու պահանջի մասով, Դատարանի 27.03.2020 թվականի վճիռը բեկանելու և փոփոխելու՝ հայցը մերժելու մասով, բեկանել և գործն այդ մասով ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ հատուկ կարծիքս այդ մասերի վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը և դրա հիմնավորումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ նույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը:

Տվյալ դեպքում բողոք բերած անձը որպես ***վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք և հիմնավորում*** վճռաբեկ բողոքում նշել է հետևյալը.

«***Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը և դրանց հիմնավորումները.***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի համաձայն Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե.

«1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:»

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝

1) առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ.

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

3) դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:»

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Սույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե՝

1) բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

1. Սույն վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 107-րդ և 186-րդ հոդվածների նորմերի միատեսակ կիրառության համար:

2020 թվականի ընթացքում տեղի ունեցած COVID-19 համավարակի, դրանով պայմանավորված արտակարգ դրության, կարանտինի, ինչպես նաև այնուհետ հայտարարված ռազմական դրության պայմաններում աշխատողների պարապուրդները կրել է համատարած բնույթ, և այդ պայմաններում աշխատողների պարապուրդի վերաբերյալ իրավանորմերի զարգացումը հանդիսանում է հրամայական, որի պայմաններում առավել քան կարևոր է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշված նորմերի կապակցությամբ իրավունքի զարգացման իր խնդրի իրականացման անհրաժեշտությունը: Սա հատկապես ակնառու է, հաշվի առնելով դրանց առնչությամբ վերաքննիչ դատարանի անհիմն մեկնաբանությունները, որոնք ստեղծվում են աշխատողների իրավունքների համատարած խախտման իրական վտանգ, այն է՝ ոչ աշխատողի մեղքով պարապուրդի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված լինելու ապացուցման բեռը աշխատողի վրա դնելով աշխատողներին պարապուրդի համար վարձատրություն պահանջելու իրական հնարավորության վտանգ այն դեպքերում, երբ փաստացի ոչ աշխատողի մեղքով պարապուրդը հետևանք է գործատուին վերագրվող սուբյեկտիվ գործոնների:

Ինչպես արդեն իսկ նշվեց վերը, սույն բողոքի շրջանակներում բարձրացված են գործատու-աշխատող հարաբերությունների կարգավորման համար կարևորագույն խնդիրներ, մասնավորապես այն, թե ով պետք է կրի պարապուրդի՝ ոչ աշխատողի մեղքով առաջացած լինելու ապացուցման պարտականությունը, որոնք են այն հանգամանքները, որոնք կարող են դիտարկվել որպես օբյեկտիվ, ինչպես են պատասխանատվության վերաբերյալ ընդհանուր դրույթները կիրառվում գործատուի կողմից իր պարտականությունների խախտման պարագայում, և ձևավորել դիրքորոշում պարապուրդի համար վճարման իրավական հիմքերի վերաբերյալ:

Ներկայումս դեռևս առկա է նշված հարցերի վերաբերյալ դիրքորոշում, որը հնարավորություն կտար նշված հարցերի գերարդիականության պայմաններում ուղղորդել դատական պրակտիկան:

2. Առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում

Ինչպես արդեն նշվեց վերը, Որոշումը վտանգում է աշխատողների ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված հիմնարար իրավունքները, մասնավորապես սեփականության իրավունքը և զրկում է նրանց դատական պաշտպանության արդյունավետ միջոցից, քանի որ աշխատողի վրա է դնում պարտապան-գործատուի կողմից իր պարտավորության խախտումը օբյեկտիվ հանգամանքներով հիմնավորված լինելու պարտավորությունը»:

Այսինքն՝ վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում որպես այն վարույթ ընդունելու հիմք նշել է բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 107-րդ և 186-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալը, սակայն որոշակիորեն չի նշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև դրա հիմնավորումը:

Բացի այդ, բողոք բերած անձը, որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք վկայակոչելով նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայության հանգամանքը, վճռաբեկ բողոքում չի նշել, թե Վերաքննիչ դատարանը նյութական կամ դատավարական իրավունքի կոնկրետ որ նորմերի խախտում է թույլ տվել, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչպես նաև այդ հիմքի հիմնավորումը:

Նման պայմաններում վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթակա էր վերադարձման՝ այն նույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ, մինչդեռ Վճռաբեկ դատարանը նման որոշում չի կայացրել:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է վճռաբեկ բողոքում որոշակիորեն չնշված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ նշելով, թե իբրև առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Վերոգրյալը համարում եմ բավարար չանդրադառնալու համար Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշված պատճառաբանություններին:

Նման պայմաններում հայտնում եմ իմ անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման վերաբերյալ:

Դատավոր՝ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ